

Վ Ճ Ի Ռ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

«28» դեկտեմբերի 2013թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը՝

նախագահությամբ՝ դատավոր Ա. Հարությունյանի,
քարտուղարությամբ՝ Կ. Մարկոսյանի,

մասնակցությամբ՝
հայցվորի ներկայացուցիչ՝ Կարեն Մեժլումյանի,
պատասխանողի ներկայացուցիչ՝ Սոնա Թևանյանի,

2013թ. դեկտեմբերի 17-ին դատարանում դռնբաց դատական նիստում քննելով վարչական գործն ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ ՀՀ Ազգային ժողովի՝ իրավունքի խախտման փաստը ճանաչելու և տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ Ազգային ժողովի՝ իրավունքի խախտման փաստը ճանաչելու և տեղեկատվություն տրամադրելուն պարտադրելու պահանջների մասին:

ՀՀ վարչական դատարանի 22.04.2013 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

ՀՀ վարչական դատարանի 07.08.2013 թվականի որոշմամբ սույն վարչական գործը նշանակվել է դատաքննության:

Դատական ակտի հրապարակման օր է հայտարարվել 28.12.2013 թվականը:

2. Հայցվորի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

Հայցվոր «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը /ներկայացուցիչ՝ Կարեն Մեժլումյան/, դիմելով դատարան, նշել է, որ 22.11.2012 թվականին հղում կատարելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածներին, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածին՝ թիվ 185-ի 9 հարցմամբ տեղեկատվություն ստանալու հարցում է ներկայացրել ՀՀ Ազգային ժողովի նախագահին՝ խնդրելով տրամադրել հետևյալ տեղեկատվությունները՝

«1. Տեղադրված են արդյոք ՀՀ ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում ՀՀ ԱԺ նախագահի կարգադրությունները:

2. Խնդրում ենք տրամադրել ՀՀ ԱԺ նախագահի 2012 թվականի առաջին կիսամյակի կարգադրությունների պատճենները:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Պատրաստ եմ վճարել տեղեկատվության պատճենահանման ծախսերը:»:

Նշված հարցման պատասխանը չստանալով՝ հայցվորը 05.12.2012 թվականին տեղեկատվություն ստանալու թիվ 187-ի 2 համարով տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում է ներկայացրել՝ հայտնելով, որ մինչ օրս չի ստացվել 22.11.2012 թվականի հարցման պատասխանը և կրկին խնդրել է տրամադրել հայցվող տեղեկատվությունը:

Նույն օրը՝ 05.12.2012 թվականին, ստացվել է ԱԺ էլեկտրոնային պատասխանն այն մասին, որ տեղեկատվությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ուստի այն կտրամադրվի 30-օրյա ժամկետում: Դրանից հետո ստացվել է ԱԺ աշխատակազմի ղեկավարի 04.03.2013 թվականի պատասխանը, որին կից ներկայացվել են ՀՀ ազգային ժողովի նախագահի կարգադրությունները, որոնց մեջ բացակայել են 10, 12, 13, 14, 19, 44, 48, 49, 50, 59, 66, 72 համարի կարգադրությունները:

Հայցվորը 07.03.2013 թվականին դիմել է ԱԺ-ին՝ խնդրելով տրամադրել նաև չտրամադրված կարգադրությունների պատճենները, որի վերաբերյալ ստացվել է 18.03.2013 թվականի պատասխանն այն մասին, որ այդ կարգադրությունները պարունակում են աշխատողի վերաբերյալ անձնական տվյալներ: Հայցվորը, հղում կատարելով ՀՀ Սահմանադրության 27-րդ և 27.1-րդ հոդվածներին և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 1-ին, 3-րդ, 6-րդ և 9-րդ հոդվածների դրույթներին, նշել է, որ պատասխանողը տեղեկատվություն տնօրինող է, սակայն ի խախտումն Սահմանադրությամբ ու օրենքներով երաշխավորված հայցվորի իրավունքների ու պատասխանողի պարտականության՝ չի տրամադրել ԱԺ նախագահի թիվ 10, 12, 13, 14, 19, 44, 48, 49, 50, 59, 66, 72 կարգադրությունները և որևէ կերպ չի հիմնավորել այդ կարգադրություններում առկա տեղեկությունների անձնական տվյալ լինելը:

Ելնելով վերոգրյալից՝ հայցվորը խնդրել է ճանաչել «Ինֆորմացիայի ազատության կետրոն» հասարակական կազմակերպության տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը և ՀՀ ազգային ժողովին պարտավորեցնել տրամադրելու ՀՀ ազգային ժողովի նախագահի թիվ 10, 12, 13, 14, 19, 44, 48, 49, 50, 59, 66, 72 կարգադրությունները:

Դատաքննության ընթացքում հայցվորի ներկայացուցիչը պնդեց հայցի պահանջն ամբողջությամբ:

3. Պատասխանող կողմի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

Պատասխանողը ներկայացրել է հայցադիմումի պատասխան, որով հայտնել է, որ հայցը լիովին անհիմն է և չի բխում քննարկվող հարաբերությունների առկա իրավական կարգավորումներից:

Հայցի անհիմն լինելն ապացուցող փաստարկները հանգում են հետևյալին՝ հայցվորն իր հայցադիմումի մեջ հղում է կատարում ՀՀ Սահմանադրությանը, մասնավորապես, 27րդ և 27.1-րդ հոդվածներին, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթներին:

Իրականում, սակայն, ծագած հարաբերությունների նկատմամբ ՀՀ Սահմանադրության՝ հայցվորի կողմից մատնանշված հոդվածները, ըստ էության, կիրառելի չեն:

Այսպես, ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածը, ամրագրելով յուրաքանչյուրի տեղեկություններ և գաղափարներ ստանալու իրավունքը, այն չի դիտարկում որպես բացարձակ իրավունք և այն իրագործելու համար ենթադրում է որոշակի նախապայմանների առկայություն: ՀՀ Սահմանադրության նշված հոդվածի մեկնաբանությունից պարզ է, որ պետական մարմինները և տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են ապահովել իրենց գործունեության վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը: Բացառություն է կազմում սահմանափակ մատչելիությամբ տեղեկատվությունը: Այսինքն՝ պետական մարմինների՝ տեղեկատվության մատչելիությունն ապահովելու պարտավորվածությունն ընդգրկում է միայն իրենց գործունեությանը վերաբերող տեղեկությունը, այսինքն՝ այս դրույթը չի կարող միանշանակ վերագրվել տվյալ պետական մարմնի աշխատակիցներին վերաբերող տեղեկությունների մատչելիության ապահովմանը: Բացի այդ, անգամ պետական մարմնի գործունեությանը վերաբերող տեղեկատվության մատչելիության սկզբունքից կարող են օրենքով սահմանված կարգով և դեպքերում կատարվել բացառություններ, ինչպես օրինակ, պետական կամ ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկությունների պարագայում: Այսինքն, սահմանադրական այս նորմը բացարձակ ու անվերապահ բնույթի չի կրում, այն ունի կիրառության որոշակի շրջանակ, ազդեցության կոնկրետ ոլորտ և նպատակային հստակ նշանակություն, այն հիմք է հանդիսանում իրականացնելու որոշակի վերահսկողություն տնտեսության, բնապահպանության և հասարակական կյանքի մյուս ոլորտների վիճակի նկատմամբ և ամենևին չի ենթադրում պետական մարմնի աշխատակիցների վերաբերյալ անհատական բնույթի տեղեկությունների մատչելիության ապահովում:

Հայցադիմումի մեջ վկայակոչված հաջորդ սահմանադրական դրույթը ՀՀ Սահմանադրության 27.1-րդ հոդվածն է, ըստ որի. «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»: Այս հոդվածի մեկնաբանությունից ակնհայտ է, որ նախ այստեղ խոսքը վերաբերում է ոչ թե

տեղեկատվություն ստանալուն ուղղված հարցումներին, այլ դիմումներին և առաջարկություններին: Ընդ որում, դրանք պետք է միտված լինեն դիմող սուբյեկտի անձնական կամ նրա կողմից և նրա միջոցով որոշ հասարակական շահերի պաշտպանություն իրականացնելուն: Մինչդեռ, հայցվորի գրությունները ոչ միայն իրենցից դիմում կամ առաջարկություն չեն ներկայացնում, այլև դրանցում նշված չէ, թե կոնկրետ ում և որ իրավունքների պաշտպանության նպատակով է կատարվում կոնկրետ հարցումը:

Վերոշարադրյալից բխում է, որ ՀՀ Սահմանադրության նշված 27-րդ և 27.1-րդ հոդվածները վիճելի հարաբերությունների նկատմամբ կիրառելի չեն, և չեն կարող դրվել հայցադիմումի հիմքում:

Ինչ վերաբերում է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքին, (այսուհետ նաև Օրենք), ապա այն, կարգավորելով տեղեկատվություն տնօրինողից ցանկացած տեղեկություն ստանալու հետ կապված հարաբերությունները, հստակ սահմանազծում է այն տեղեկությունների շրջանակը, որոնք ամեն դեպքում տեղեկատվություն տնօրինողի կողմից ենթակա են տրամադրման և այն տեղեկությունների շրջանակը, որոնք ազատորեն տրամադրման ենթակա չեն: Այսպես, Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված դեպքերում»: Նույն օրենքի 8-րդ հոդվածով սահմանվում են տեղեկատվության ազատության սահմանափակումները, մասնավորապես, հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Տեղեկատվություն տնօրինողը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա.

- 1) պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք,
- 2) խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը,
- 3) պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները,
- 4) բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք).
- 5) խախտում է հեղինակային իրավունքը և (կամ) հարակից իրավունքները:»:

Հոդվածի 3-րդ մասը, իր հերթին, սահմանում է տեղեկությունների այն շրջանակը, որոնց տրամադրումը չի կարող մերժվել, մասնավորապես, դա այն տեղեկատվությունն է, որը.

- 1) վերաբերում է քաղաքացիների անվտանգությանը և առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերին, ինչպես նաև տարերային (ներառյալ պաշտոնապես կանխատեսվող) աղետներին և դրանց հետևանքներին.
- 2) ներկայացնում է Հայաստանի Հանրապետության տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաև բնության և շրջակա միջավայրի պաշտպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, առևտրի, մշակույթի բնագավառում տիրող իրական վիճակը.

3) չտրամադրելը բացասական ազդեցություն կունենա Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական և հոգևոր-մշակութային զարգացման պետական ծրագրերի իրականացման վրա:

Պատասխանողը նշել է, որ եթե վերոնշյալ հոդվածի համապատասխան մասերը ենթարկվի իրավահամեմատական վերլուծության, ապա ակնհայտ կդառնա հետևյալ պատկերը. Օրենքով սահմանվում է տեղեկությունների այն շրջանակը, որի տրամադրումը իմպերատիվ կերպով ենթակա է մերժման ցանկացած պարագայում և տեղեկությունների այն շրջանակը, որն իմպերատիվ կերպով ենթակա է տրամադրման ցանկացած պարագայում:

Սակայն Օրենքը չի հստակեցնում այն տեղեկությունների հավելյալ շրջանակը, որոնք տեղեկատվություն տնօրինողի կողմից կարող են չտրամադրվել, եթե դրանց տրամադրման առնչությամբ այլ իրավական ակտերով սահմանված է տեղեկատվության պահպանման և/կամ շրջանառության սահմանափակման այլ ռեժիմ:

Այսինքն, այն բոլոր դեպքերում, երբ հայցվող տեղեկատվությունն առկա է տեղեկատվություն տնօրինողի մոտ, սակայն որևէ օրենսդրական ակտով դրա տրամադրման կապակցությամբ սահմանված են որոշակի նախադրյալների առկայություն կամ բացակայություն, կամ որոշակի արգելքներ կամ սահմանափակումներ, ապա տվյալ դեպքերում տեղեկատվության տրամադրման հետ կապված հարաբերությունները ենթակա են կարգավորման ոչ միայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով, այլ նաև համապատասխան իրավական ակտերով: Մասնավորապես, այդպիսիք են հանդիսանում ՀՀ աշխատանքային օրենսգիրքը, ինչպես նաև «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքը:

Հայցվորի կողմից հայցադիմումում մատնանշված տեղեկությունների տրամադրումը մերժելու հիմքում դրված են եղել հենց վերոնշյալ իրավական ակտերի դրույթները: Մասնավորապես, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 134-րդ հոդվածի համաձայն. «Աշխատողի անձնական տվյալները փոխանցելիս գործատուն պարտավոր է պահպանել հետևյալ պահանջները.

աշխատողի անձնական տվյալները չհայտնել երրորդ անձանց՝ առանց աշխատողի գրավոր համաձայնության, բացառությամբ այն դեպքերի, երբ դա անհրաժեշտ է աշխատողի կյանքին և առողջությանը սպառնացող վտանգը կանխելու համար, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում:»:

Քանի որ հայցվորի կողմից պահանջվող կարգադրությունները վերաբերում են պատասխանողի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող անձանց, ուստի նշված դրույթների ուժով պատասխանողի կողմից մերժվել է իր հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող անձանց վերաբերյալ անձնական բնույթի տեղեկություններ պարունակող փաստաթղթերի տրամադրման պահանջը: Այս մասին հստակ կերպով նշված է նաև «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ին 14.03.2013թ. ուղարկված պատասխան գրության մեջ:

Բացի այդ «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքը ևս կարգավորում է քննարկվող հարբերությունները՝ որպես անհատական տվյալ սահմանելով ֆիզիկական անձին վերաբերող փաստերի, դեպքերի, հանգամանքների մասին ցանկացած տվյալ այնպիսի տեսքով, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ նույնականացնել անհատի ինքնությունը (հոդված 3): Այն սահմանում է նաև ապանձնավորված անձնական տվյալ հասկացությունը՝ որպես այդպիսին դիտարկելով ֆիզիկական անձանց վերաբերող ցանկացած տվյալ այնպիսի տեսքով, որը թույլ չի տալիս նույնականացնել անձի ինքնությունը: Միաժամանակ նշված օրենքը սահմանում է անհատական տվյալների տեղեկատվական բազաների մատչելիության պայմանները, որտեղ նշվում է որ դա, ի թիվս այլ տեղեկությունների, վերաբերում է նաև ապանձնավորված անհատական տվյալներ պարունակող գրադարանային և արխիվային փաստաթղթերի մատչելությանը (հոդված 8): Հայցվորի կողմից պահանջվող կարգադրությունները պարունակում են տվյալների այնպիսի համակցություն, որը հստակորեն հնարավորություն է տալիս անհատականացնել անձին, ուստի դրանք դուրս են գալիս վերոնշյալ հոդվածի կարգավորման շրջանակներից:

Այսպիսիով՝ հայցվորի կողմից վիճարկվող պատասխանի բովանդակությունը լիովին համապատասխանում է վերը նշված օրենսդրական կարգավորումներին: Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ պատասխանողը խնդրել է հայցն ամբողջությամբ մերժել:

Լսելով հայցվորի ներկայացուցչի, պատասխանողի ներկայացուցչի, բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով, վերլուծելով և գնահատելով գործով ձեռք բերված բոլոր ապացույցները, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ՝ ՀՀ վարչական դատարանը գտնում է, որ հայցը ենթակա է բավարարման մասնակի հետևյալ պատճառաբանությամբ.

4. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը, Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

- «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը 22.11.2012 թվականին թիվ 185-ի 9 հարցմամբ տեղեկատվություն ստանալու հարցում է ներկայացրել ՀՀ ազգային ժողովի նախագահին,

- «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը 05.12.2012 թվականին թիվ 187-ի 2 համարով տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում է կատարել,

- 05.12.2012 թվականին հայցվորին է ուղարկվել ՀՀ ազգային ժողովի էլեկտրոնային պատասխանն այն մասին, որ տեղեկատվությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ուստի այն կտրամադրվի 30-օրյա ժամկետում,

- ՀՀ ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի 04.03.2013 թվականի գրությամբ պատասխան է ներկայացվել հայցվորի 22.11.2012 թվականի թիվ 185-ի 9 և 05.12.2012 թվականի թիվ 187-ի 2 հարցումներին՝ տրամադրելով ՀՀ ազգային ժողովի նախագահի պահանջվող կարգադրությունները՝ բացառությամբ աժ նախագահի 2012 թվականի թիվ 10, 12, 13, 14, 19, 44, 48, 49, 50, 59, 66, 72 համարի կարգադրությունները,

Հայցապահանջով հայցվորը պահանջել է ճանաչել «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը և պարտավորեցնել ՀՀ Ազգային ժողովին տրամադրել ՀՀ Ազգային ժողովի նախագահի թիվ 10, 12, 13, 14, 19, 44, 48, 49, 50, 59, 66, 72 կարգադրությունների պատճենները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործի քննության նախապատրաստական փուլում հայցվորի ներկայացուցչի կողմից հայցի առարկան և հիմքերը ներկայացնելիս մատնանշվեց, որ ներկայացված պահանջներն ինքնուրույն պահանջներ են, սակայն սկզբունքորեն փոխկապակցված են՝ դատարանն արձանագրում է, որ հայցվորի կողմից ներկայացված իրավունքի խախտման փաստը, որպես այդպիսին, ենթակա է քննության պահանջված կարգադրությունների տրամադրումը մերժելու իրավաչափության քննության համատեքստում: Համապատասխանաբար, ելնելով վերոգրյալից՝ առավել նպատակահարմար է սկզբում անդրադառնալ ներկայացված՝ գործողության կատարման հայցին, որի վերաբերյալ դատարանի դիրքորոշումից ելնելով՝ կկատարվի վերլուծություն փաստի ճանաչման պահանջի կապակցությամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հատատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը /պաշտոնատար անձը/, որն ընդունել է վիճարկվող իրավական ակտը կամ կատարել է վիճարկվող գործողությունը կամ չի կատարել որևէ հայցվող գործողություն, սակայն հայցվորի պնդմամբ պարտավոր էր կատարել, կրում է իր որոշման, գործողության կամ անգործության համար հիմք ծառայած փաստական հանգամանքների ապացուցման բեռը: Նույն հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմը:

Ապացուցման իր պարտականությունը կատարելով՝ պատասխանողի կողմից երկու հանգամանք է դրվում հայցապահանջի առարկությունների հիմքում՝ այն, որ ՀՀ Ազգային ժողովը, որպես գործատու, ելնելով աշխատանքային հարաբերությունները բխող՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 131, 134-րդ և 199-րդ հոդվածներով սահմանված սահմանափակումներից, իրավասու չէ տրամադրել աշխատողի

վերաբերյալ տեղեկատվություն՝ առանց վերջինիս գրավոր համաձայնության, և որ հայցվող կարգադրությունների պատճենների տրամադրումը կհանդիսանա օրենքով արգելված՝ անձի նույնականացման հնարավորություն ընձեռող անհատական տվյալների բացահայտում:

Դատարանն անհրաժեշտ է համարում փաստել, որ ի կատարումն դատաքննությամբ դատարանի կողմից ներկայացված պահանջի՝ պատասխանողի կողմից դատարան է ներկայացվել տեղեկանք՝ հայցվող կարգադրություններում առկա տվյալների մասին: Տվյալ տեղեկանքի ուսումնասիրմամբ, ինչպես նաև պատասխանողի ներկայացուցչի բանավոր հայտարարությամբ հաստատվեց, որ ՀՀ ԱԺ նախագահի 2012 թվականի 1-ին եռամսյակի թվով 12 կարգադրությունները, որոնց տրամադրումը հայցվորին մերժվել է, վերաբերում են Ազգային Ժողովի պատգամավորներին (թիվ 49 կարգադրություն), Ազգային Ժողովի աշխատակազմի աշխատակիցներին (թիվ 10, 12, 14, 44, 48, 50, 59, 72 կարգադրություններ), ինչպես նաև Ազգային Ժողովի աշխատակազմի հաստիքացուցակին կամ դրանում փոփոխություններ կատարելուն, այդ թվում՝ հաստիքների դրույքաչափերի փոփոխությանը (թիվ 13, 19, 66 կարգադրություններ):

1.Ազգային ժողովի պատգամավորներին վերաբերող կարգադրությունները տրամադրելը մերժելու իրավաչափության կապակցությամբ՝ այն հիմնավորմամբ, որ դա կհանդիսանա անհատական տվյալների օրենքով արգելված բացահայտում, ՀՀ վարչական դատարանի դիրքորոշումը հետևյալն է.

Պատասխանողի կողմից ներկայացված հայցադիմումի պատասխանում նշվել է, որ «... Հայցվորի կողմից պահանջվող կարգադրությունները պարունակում են տվյալների այնպիսի համակցություն, որը հստակորեն հնարավորություն է տալիս անհատականացնել անձին...»:

«Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Սույն օրենքը կարգավորում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կամ համայնքային հիմնարկների, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից անհատական տվյալների մշակմանն առնչվող հարաբերությունները»: Նույն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ անհատական տվյալ է հանդիսանում «ֆիզիկական անձին վերաբերող փաստերի, դեպքերի, հանգամանքների մասին ցանկացած տվյալ այնպիսի տեսքով, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ նույնականացնել անհատի ինքնությունը»: Վերոնշյալ հոդվածի վերլուծությունը վկայում է, որ անհատական տվյալ է հանդիսանում այն տեղեկատվությունը, որի միջոցով հնարավոր է բացահայտել անձի ինքնությունը և այդ կերպ տարբերակել տվյալ անձին հասարակության մյուս անդամներից: Տվյալ պարագայում, ՀՀ ԱԺ նախագահի 2012 թվականի ԱԺ կին պատգամավորներին մարտի 8-ի առթիվ պարգևատրում շնորհելու մասին թիվ Կ-49-Ա կարգադրությունը տրամադրելուն մերժելու իրավաչափության պարզման կապակցությամբ, դատարանի գնահատմամբ ենթակա է պարզման այն հարցը, թե արդյո՞ք տվյալ կարգադրությունն առհասարակ «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքի պաշտպանության ներքո է գտնվում, այլ կերպ ասած՝ արդյո՞ք պարզապես կարգադրության անվանմամբ հնարավոր չէ եզրակացնել կարգադրության սուբյեկտ

հանդիսացող անձանց ինքնությունը և դա հնարավոր կլինի բացահայտել կարգադրության բովանդակության ուսումնասիրմամբ:

Պատասխանողի կողմից դատարան ներկայացված ինչպես 25.07.2013 թվականի թիվ Ա-717, այնպես էլ 27.11.2013 թվականի թիվ Ա-1173 տեղեկանքների բովանդակությունից բխում է, որ ՀՀ ԱԺ նախագահի 2012 թվականի թիվ Կ-49-Ա կարգադրությունը ԱԺ կին պատգամավորներին մարտի 8-ի առթիվ պարգևատրում շնորհելու մասին է և այն ներառում է «...Պարգևատրվողների զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ ԱԺ կին պատգամավորներ, կարգադրության առարկան՝ մարտի 8-ի առթիվ դրամական պարգևատրման մասին, պարգևատրման չափը»:

ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում օրենսդիր իշխանությունն իրականացնում է Ազգային Ժողովը: Համաձայն ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի՝ Ազգային Ժողովը կազմված է հարյուր երեսունմեկ պատգամավորից:

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Ազգային Ժողովի մարմիններն են Ազգային Ժողովի նախագահը, նրա տեղակալները, պատգամավորները և հանձնաժողովները»:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնը քաղաքական և ընտրովի պաշտոն է: Նշված հոդվածների վերլուծությունը վկայում է այն մասին, որ ՀՀ Ազգային Ժողովի պատգամավորի պաշտոնը հանրային պաշտոն է և համապատասխանաբար տվյալ պաշտոնը զբաղեցնող անձինք արդեն իսկ անհատապես հայտնի են հանրությանը կամ առնվազն յուրաքանչյուր ԱԺ պատգամավորի պաշտոն զբաղեցնող անձին անհատապես տարբերակելու հնարավորություն ստեղծված է հանրամատչելի աղբյուրների օգտագործմամբ:

Ելնելով այն դիտակետից, որ գործի քննության փուլում արդեն իսկ պարզ դարձավ, որ խնդրո առարկա կարգադրությունը վերաբերվում է ԱԺ կին պատգամավորներին, դատարանի գնահատմամբ, ՀՀ ԱԺ նախագահի 2012 թվականի ԱԺ կին պատգամավորներին մարտի 8-ի առթիվ պարգևատրում շնորհելու մասին թիվ Կ-49-Ա կարգադրությունը տրամադրելը մերժելն այն հիմնավորմամբ, որ դա նպատակ է հետապնդում ապահովել անհատական տվյալների գաղտնիությունը՝ իրավաչափ չէ՝ այն հաշվառմամբ, որ քննարկվող կարգադրության բովանդակության բացահայտումը կարգադրության սուբյեկտների անհատականացման լրացուցիչ գործոն չի հանդիսանա:

Ինչ վերաբերվում է խնդրո առարկա կարգադրության մեջ զետեղված՝ դրամական պարգևատրման չափի մասին տվյալին, ապա դատարանի գնահատմամբ այն տեղեկատվության ազատության սահմանափակման առարկա չի կարող հանդիսանալ այն հիմնավորմամբ, որ ՀՀ Ազգային Ժողովի պատգամավորի պաշտոնային դրույքաչափը սահմանված է «Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների պաշտոնային դրույքաչափի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ Ազգային Ժողովի

պատգամավորը, որպես բարձրաստիճան պաշտոնատար անձ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով է ներկայացնում գույքի, եկամուտների հայտարարագրեր և պատգամավորի եկամուտը, որը ներառում է նաև դրամական պարգևատրումը, բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի կողմից հրապարակման ենթակա տվյալ է:

Դատարանը չի անդրադառնում աշխատանքային իրավահարաբերություններից բխող օրենսդրական սահմանափակումների լույսի ներքո ԱԺ պատգամավորների վերաբերյալ կարգադրությունների տրամադրումը մերժելու պատասխանողի իրավական փաստարկին՝ հաշվի առնելով, որ դատաքննությամբ պատասխանողի ներկայացուցիչը հայտարարեց, որ տվյալ փաստարկն ուղղված է միայն ԱԺ աշխատակազմի աշխատակիցների վերաբերյալ կարգադրությունների տրամադրումը մերժելու իրավաչափության հիմնավորմանը:

Վերոնշյալ վերլուծության լույսի ներքո դատարանի գնահատմամբ խախտվել է հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության տեղեկատվություն ստանալու իրավունքը՝ ՀՀ ԱԺ նախագահի 2012 թվականի ԱԺ կին պատգամավորներին մարտի 8-ի առթիվ պարգևատրում շնորհելու մասին թիվ Կ-49-Ա կարգադրության պատճենի տրամադրումը մերժելու մասով և հայցվորի պահանջը ՀՀ ԱԺ նախագահի 2012 թվականի ԱԺ կին պատգամավորներին մարտի 8-ի առթիվ պարգևատրում շնորհելու մասին թիվ Կ-49-Ա կարգադրության պատճենը տրամադրելուն պարտավորեցնելու մասով ենթակա է բավարարման:

2. Ազգային ժողովի աշխատակազմի հաստիքացուցակին կամ դրանում փոփոխություններ կատարելուն, այդ թվում՝ հաստիքների դրույքաչափերի փոփոխությանը վերաբերող ՀՀ Ազգային Ժողովի նախագահի 2012 թվականի թիվ 13, 19, 66 կարգադրությունները տրամադրելը մերժելու կապակցությամբ դատարանի դիրքորոշումը հետևյալն է.

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն: Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից: Լրատվամիջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է: Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանությունն առաջարկող անկախ հանրային ռադիոյի և հեռուստատեսության առկայությունը և գործունեությունը:»

ՀՀ Սահմանադրության 27.1 հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և

ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:
«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝
«1.Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և
(կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու
տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը:

Դատարանն արձանագրում է, որ տեղեկատվություն ստանալու վերոնշյալ
իրավական երաշխիքները կարող են սահմանափակվել բացառապես ՀՀ
Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված դեպքերում, եթե դա բխում է
պետական անվտանգության ապահովման, հասարակական կարգի պահպանման,
հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության,
այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի
համբավի պաշտպանության անհրաժեշտությունից (ՀՀ Սահմանադրության հոդված
43) կամ եթե տվյալ տեղեկատվության տրամադրումը խախտում է պետական,
ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիքը, մարդու անձնական և
ընտանեկան կյանքի գաղտնիությունը, պարունակում է հրապարակման ոչ ենթակա
նախնական քննության տվյալներ, բացահայտում է մասնագիտական
գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող
տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք) կամ խախտում է
հեղինակային իրավունքը և (կամ) հարակից իրավունքները (Տեղեկատվության
ազատության մասին» ՀՀ օրենքի հոդված 8):

«Ազգային Ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի «Ժե.1)» կետի
համաձայն՝ «Ազգային ժողովի նախագահը ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով
սահմանված կարգով հաստատում է Աշխատակազմի հաստիքացուցակը և
աշխատողների պաշտոնային դրույքաչափերը»:

Դատաքննությամբ ձեռք բերված տեղեկանքների համաձայն՝ թիվ 13, 19, 66
կարգադրությունները պարունակում են տեղեկատվություն հաստիքացուցակում
փոփոխություններ կատարելու մասին և որոշակի հաստիքների դրույքաչափերը
փոփոխելու մասին:

Համաձայն «Ազգային Ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի, ինչպես նաև
ՀՀ Ազգային ժողովի նախագահի 05.10.2009 թվականի թիվ ՆՈ-005-Ն որոշմամբ
հաստատված ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կանոնադրության, ԱԺ
աշխատակազմի հաստիքացուցակը և աշխատակիցների պաշտոնային
դրույքաչափերը կազմվում են և ներկայացվում են ԱԺ նախագահի հաստատմանը՝
ԱԺ աշխատակազմի կառուցվածքի հիման վրա:

Դատարանի գնահատմամբ հրապարակային իրավական ակտի հիման վրա
հաստատվող հաստիքացուցակը և դրույքաչափերը չեն կարող հանդիսանալ ՀՀ
Սահմանադրության 43-րդ հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ
օրենքի տեղեկատվության ազատության սահմանափակման առարկա՝ այն
հաշվառմամբ, որ հաստիքացուցակն իրենից ներկայացնում է պաշտոնների
անվանացանկ՝ ըստ կառուցվածքային ստորաբաժանումների և պաշտոնների քանակ,
իսկ աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը տվյալ պաշտոնի անձնագրով

նախատեսված պարտականությունների կատարման համար սահմանված վարձատրության նվազագույնից առավելագույն չափն է:

Վերոնշյալ վերլուծության լույսի ներքո դատարանի գնահատմամբ խնդրո առարկա կարգադրությունների տրամադրումը պատասխանողի կողմից մերժվել է բավարար իրավական հիմնավորումների բացակայությամբ, ուստի, դատարանը գտնում է, որ խախտվել է հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության տեղեկատվություն ստանալու իրավունքը՝ ՀՀ ԱԺ նախագահի 2012 թվականի թիվ 13, 19, 66 կարգադրությունների պատճենների տրամադրումը մերժելու մասով և հայցվորի պահանջը ՀՀ ԱԺ նախագահի 2012 թվականի թիվ 13, 19, 66 կարգադրությունների պատճենները տրամադրելուն պարտավորեցնելու մասին ենթակա է բավարարման:

3. Պատասխանողի կողմից մերժվել է ՀՀ ԱԺ նախագահի 2012 թվականի թիվ 10, 12, 14, 44, 48, 50, 59, 72 կարգադրությունների տրամադրումն այն հիմնավորմամբ, որ տվյալ կարգադրությունները վերաբերում են Ազգային Ժողովի աշխատակազմի աշխատակիցներին և դրանց տրամադրմամբ կխախտվի համապատասխան աշխատակիցների՝ «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքով և ՀՀ աշխատանքային օրենսգրքի դրույթներով վերջիններիս՝ որպես անհատների և աշխատողների պաշտպանվող իրավունքները:

Դատաքննությամբ ձեռք բերված տեղեկանքներով հաստատվեց այն հանգամանքը, որ հայցվող թիվ 10, 12, 14, 44, 48, 50, 59, 72 կարգադրությունները վերաբերում են ԱԺ աշխատակազմի աշխատակիցների նկատմամբ խրախուսանքի միջոցներ կիրառելուն, վերջիններիս նկատմամբ կարգապահական տույժ կիրառելուն, ինչպես նաև աշխատավարձին հավելավճար սահմանելուն: Ընդ որում, համաձայն նշված տեղեկանքների՝ կարգադրություններում նշված է աշխատակցի անուն-ազգանունը, պաշտոնը, պարգևատրման դեպքում՝ պարգևատրման չափը, հավելավճար սահմանելու դեպքում՝ հավելավճարի չափը, ինչպես նաև կարգապահական տույժի տեսակը:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հանրային ծառայությունը պետությանը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացումն է, որն ընդգրկում է պետական ծառայությունը, համայնքային ծառայությունը, պետական և համայնքային պաշտոնները:

2. Պետական ծառայությունը մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետական մարմիններին վերապահված խնդիրների և գործառույթների իրականացմանը:

3. Պետական ծառայությունն ընդգրկում է քաղաքացիական ծառայությունը, դատական ծառայությունը, դիվանագիտական ծառայությունը, հատուկ ծառայությունները՝ պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության, հարկային, մաքսային, փրկարար ծառայության հանրապետական գործադիր մարմիններում, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայությունը, Ազգային անվտանգության խորհրդում, ինչպես նաև օրենքներով նախատեսված այլ ծառայություններ:...»

«ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ «Աշխատակազմում պետական ծառայությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պետական ծառայության տեսակ է:»

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պետական ծառայողների աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ, եթե սույն օրենքով այդ հարաբերությունները կարգավորող առանձնահատկություններ սահմանված չեն»: ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ քաղաքական, հայեցողական կամ քաղաքացիական պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաև քաղաքացիական, օրենքով սահմանված այլ պետական (հատուկ) ծառայությունների և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի աշխատողների աշխատանքային (ծառայողական) հարաբերությունները կարգավորվում են սույն օրենսգրքով, եթե համապատասխան օրենքներով այլ բան նախատեսված չէ: Նշված հոդվածների բովանդակության վերլուծությունը վկայում է, որ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայություն իրականացնող աշխատակիցների այն հարաբերությունները, որոնք կանոնակարգված չեն տվյալ ծառայությունը կարգավորող օրենքով, ենթակա են կանոնակարգման ՀՀ աշխատանքային օրենսգրքով:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Աշխատողի անձնական տվյալները փոխանցելիս գործատուն պարտավոր է պահպանել հետևյալ պահանջները.

1) աշխատողի անձնական տվյալները չհայտնել երրորդ անձանց՝ առանց աշխատողի գրավոր համաձայնության, բացառությամբ այն դեպքերի, երբ դա անհրաժեշտ է աշխատողի կյանքին և առողջությանը սպառնացող վտանգը կանխելու համար, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում...»

Նույն օրենսգրքի 131-րդ հոդվածի համաձայն՝ «Աշխատողի անձնական տվյալները աշխատանքային հարաբերությունների հետ կապված և որոշակի աշխատողին վերաբերող՝ գործատուին անհրաժեշտ տեղեկություններն են»: Նույն օրենսգրքի 13-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային հարաբերությունները աշխատողի և գործատուի փոխադարձ համաձայնության վրա հիմնված հարաբերություններն են, ըստ որի՝ աշխատողն անձամբ, որոշակի վարձատրությամբ կատարում է աշխատանքային գործառույթներ՝ ենթարկվելով ներքին կարգապահական կանոններին, իսկ գործատուն ապահովում է աշխատանքի պայմաններ:

Միաժամանակ, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 199-րդ հոդվածի համաձայն՝ «Աշխատողի աշխատավարձի և աշխատանքի այլ պայմանների վերաբերյալ տվյալները տրամադրվում կամ հրապարակվում են միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում կամ աշխատողի համաձայնությամբ»:

Նշված հոդվածների վերլուծությունն ուղղակիորեն վկայում է այն մասին, որ աշխատողին վերաբերող տվյալները, որոնք առնչվում են աշխատանքային հարաբերություններին, այն է՝ աշխատանքային պարտականությունները կատարելուն, վարքագծի որոշակի կանոն դրսևորելուն և դրա դիմաց վարձատրություն ստանալուն, հանդիսանում են աշխատողի անձնական տվյալ և կարող են փոխանցվել 3-րդ անձանց բացառապես աշխատողի համաձայնությամբ, բացառությամբ տվյալ անձի կյանքին և առողջությանը սպառնացող վտանգի կանխման դեպքերի:

«ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երկարամյա ծառայության, ինչպես նաև ծառայողական պարտականությունները և հատուկ առաջադրանքները գերազանց կատարելու համար պետական ծառայողի նկատմամբ կարող են կիրառվել խրախուսանքի տեսակներ, այդ թվում՝ պարգևատրումներ: ՀՀ աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Աշխատավարձը ներառում է հիմնական աշխատավարձը և գործատուի կողմից աշխատողին իր կատարած աշխատանքի դիմաց տրված լրացուցիչ վարձատրությունը»: Նույն օրենսգրքի 195-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «...աշխատավարձի մեջ են ներառվում աշխատանքի վարձատրության բոլոր տեսակները (հիմնական աշխատավարձ, լրացուցիչ աշխատավարձ՝ հավելումներ, հավելավճարներ, լրավճարներ, պարգևատրումներ և այլն), որոնք կիրառվում են տվյալ կազմակերպությունում՝ անկախ վճարման աղբյուրից»:

Նշված նորմերի համակարգային վերլուծության հիման վրա պետք է եզրակացնել, որ պարգևատրումը աշխատավարձի կազմում ընդգրկվող լրացուցիչ վարձատրություն է, այսինքն՝ պարգևատրումն աշխատավարձին հավասարեցված վճարում է և ըստ այդմ՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի հիմքով համարվում է անձնական տվյալ: «ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով նախատեսված է, որ ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ինչպես նաև ծառայողական լիազորությունները վերազանցելու, ներքին կարգապահական կանոնները խախտելու դեպքերում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, պետական ծառայողի նկատմամբ կարող են կիրառվել կարգապահական տույժերի հետևյալ տեսակները՝

- 1) նախազգուշացում.
- 2) նկատողություն.
- 3) խիստ նկատողություն.
- 4) օրենքով սահմանված կարգով աշխատավարձի իջեցում.
- 5) պետական ծառայության ավելի բարձր դասային աստիճանի, բացառությամբ պետական ծառայության բարձրագույն դասային աստիճանի, իջեցում՝ մեկ աստիճանով.
- 6) զբաղեցրած պաշտոնից ազատում»:

Կարգապահական տույժի տեսակների վերլուծությունն իսկ վկայում է այն մասին, որ տույժի տեսակ կիրառելու մասին կարգադրությունը, որում զետեղված է աշխատակցի

անուն-ազգանունը, պաշտոնը և կարգապահական տույժի տեսակը հստակորեն աշխատակցի անձնական տվյալ է, ինչը չի կարող հրապարակվել կամ փոխանցվել երրորդ անձի՝ առանց տվյալ աշխատակցի համաձայնության:

Դատարանի գնահատմամբ ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածներով, ինչպես նաև «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով երաշխավորված՝ տեղեկատվության ազատությունը և տեղեկատվություն ստանալու իրավունքը չեն կարող բացարձականացվել: Այդ մասին է վկայում նաև ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածը, որի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ազատ է կատարելու այն, ինչն արգելված չէ օրենքով և չի խախտում այլոց իրավունքներն ու ազատությունները»: ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որպեսզի հարգվի իր անձնական ու ընտանեկան կյանքը: Առանց անձի համաձայնության նրա վերաբերյալ չի կարելի հավաքել, պահպանել, օգտագործել կամ տարածել այլ տեղեկություններ, քան նախատեսված է օրենքով: Արգելվում է անձին վերաբերող տեղեկությունների օգտագործումն ու տարածումը, եթե դա հակասում է տեղեկությունների հավաքման նպատակներին կամ չի նախատեսված օրենքով»:

ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի համաձայն՝ «Մարդու և քաղաքացու՝ Սահմանադրության 23-25, 27, 28-30, 30.1-րդ հոդվածներով, 32-րդ հոդվածի երրորդ մասով ամրագրված հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար»:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված դեպքերում»:

Նույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինողը մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիությունը:

ՀՀ Սահմանադրության, ՀՀ աշխատանքային օրենսգրքի, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև «ՀՀ ԱԾ աշխատակազմում պետական ծառայության մասին» ՀՀ օրենքի վերոնշյալ հոդվածների համակարգային վերլուծությունը վկայում է այն մասին, որ խնդրո առարկա կարգադրություններն իրենց բովանդակությամբ տեղեկատվություն են պարունակում աշխատակազմի աշխատակիցների անձնական տվյալների մասին, ինչի հիման վրա պետք է եզրակացնել, որ հայցվող՝ Ազգային ժողովի նախագահի 2012 թվականի թիվ 10, 12, 14, 44, 48, 50, 59, 72 կարգադրությունների պատճենները որպես անձնական տվյալ,

կարող էին տրամադրվել բացառապես այն աշխատողների գրավոր համաձայնությամբ, որոնք հանդիսանում են խնդրո առարկա կարգադրությունների սուբյեկտ, որպիսի համաձայնություններ տվյալ դեպքում ձեռք չէին բերվել: Հետևաբար՝ մերժելով պահանջվող տեղեկատվության տրամադրումը, պատասխանող կողմը դրսևորել է իրավաչափ վարքագիծ՝ ապահովելով իր աշխատակիցների անձնական տվյալները պահպանելու իր՝ որպես գործատուի պարտականությունը:

Նման պայմաններում դատարանը գտնում է, որ պատասխանողի թիվ 10, 12, 14, 44, 48, 50, 59, 72 կարգադրությունների պատճենները տրամադրելը մերժելով հայցվորի՝ տեղեկատվություն ստանալու իրավունքը չի խախտվել, և հայցվորի պահանջը՝ խնդրո առարկա կարգադրությունների պատճենները տրամադրելուն պարտավորեցնելու մասին, ենթակա է մերժման:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատարանի վերոնշյալ վերլուծությունը բավարար է թիվ 10, 12, 14, 44, 48, 50, 59, 72 կարգադրությունների տրամադրումը մերժելը իրավաչափ դիտարկելու համար՝ դատարանը չի անդրադառնում տվյալ կարգադրությունների տրամադրման մերժումը հիմնավորող՝ «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքի վերլուծությանը:

Միաժամանակ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով լուծելով դատավարության մասնակիցների միջև դատական ծախսերի բաշխման հարցը՝ դատարանը գտնում է, որ սույն գործով դատական ծախսերը բաղկացած են պետական տուրքից և հայցվոր իրավաբանական անձի ներկայացուցչին վճարված գումարից, որը կողմերի միջև պետք է բաշխվի հետևյալ կերպ.

Դատարանն արձանագրում է որ հայցվորը, ներկայացնելով երկու ինքնուրույն պահանջ, վճարել էր մեկ հայցապահանջի համար նախատեսված պետական տուրքի գումար՝ 4.000 դրամի չափով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե հայցվորի կամ բողոք բերողի պահանջները բավարարվում են մասամբ, ապա հաշվանցման եղանակով դատարանը կարող է հայցվորին, բողոք բերողին և պատասխանողին փոխադարձաբար ազատել դատական ծախսերի փոխհատուցումից կամ համաչափորեն բաշխել դատական ծախսերի փոխհատուցումը նրանց միջև: Առաջնորդվելով նշված հոդվածով՝ դատարանը գտնում է, որ պատասխանողից հոգուտ պետական բյուջեի ենթակա է բռնագանձման 4.000 դրամ՝ որպես պետական տուրքի գումար:

Անդրադառնալով 247.000 դրամ փաստաբանի վարձատրության գումարին՝ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով դատական ծախսերի մեջ ընդգրկված է նաև փաստաբանի վարձատրությունը, որն ինչպես յուրաքանչյուր դատական ծախս, բաշխվում է կողմերի միջև ըստ բավարարված հայցապահանջների չափի: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ ներկայացուցիչներին վճարվող գումարների գծով դատական ծախսերի

փոխհատուցումը դրվում է համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության կամ համայնքի վրա, եթե գործը լուծվել է ի վնաս իրենց: Փոխհատուցման չափը որոշելիս դատարանը հիմք է ընդունում ծախսերի ողջամիտ չափերը: ՀՀ դատական օրենսգրքի 90-րդ հոդվածի 3-րդ մասի 10-րդ կետի համաձայն՝ դատավորը պարտավոր է չհաստատել այն դատական ծախսերը, որոնց չափը չի համապատասխանում դրանց ողջամիտ արժեքին:

Հաշվի առնելով «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ներկայացուցչի կատարած դատավարական գործողությունների ծավալը և բնույթը, գործի քննության տևողությունը, դատական ակտով բավարարված պահանջի և պահանջվող փաստաբանական վճարի չափի հարաբերակցությունը՝ ՀՀ վարչական դատարանը սույն գործով փաստաբանական ծառայություններ մատուցելու դիմաց վճարման ենթակա գումարի ողջամիտ չափ է համարում 50.000 դրամ: Ուստի, պատասխանողից հոգուտ հայցվորի ենթակա է բռնագանձման նաև 50.000 դրամ՝ որպես իրավաբանական անձի ներկայացուցչին վճարված գումարի փոխհատուցում:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ, 112-115-րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132-րդ հոդվածներով՝ դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հայցն ընդդեմ ՀՀ Ազգային ժողովի՝ իրավունքի խախտման փաստը ճանաչելու և տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին, բավարարել մասնակի:

Ճանաչել «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի 2012 թվականի թիվ Կ-13-Ա, Կ-19-Ա, Կ-49-Ա, Կ-66-Ա կարգադրությունների պատճենները տրամադրելը մերժելու մասով: Պարտավորեցնել ՀՀ Ազգային ժողովին՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությանը տրամադրել ՀՀ Ազգային ժողովի նախագահի 2012 թվականի թիվ Կ-13-Ա, Կ-19-Ա, Կ-49-Ա, Կ-66-Ա կարգադրությունների պատճենները:

Հայցը մնացած մասով մերժել:

ՀՀ Ազգային ժողովից հոգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 4.000 դրամ՝ որպես պետական տուրքի գումար:

ՀՀ Ազգային ժողովից հոգուտ հայցվորի բռնագանձել 50.000 դրամ՝ որպես հայցվորի

կողմից ներկայացուցչին վճարված դատական ծախսի փոխատուցում:
Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և
կարող է բողոքարկվել վերաքննության կարգով՝ ՀՀ վարչական վերաքննիչ
դատարան:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի
հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

_____ -ին վճիռը մտել է օրինական ուժի մեջ: